Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
փետրվարի 17-ի N 143 - Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԵ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոնե պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, Հայաստանի Հանրապետության տարածքում հումանիտար ականազերծում, տեղադրված, սակայն չպայթած արկերը և ականները ոչնչացնող, ժամկետանց կամ կիրարկման համար ոչ պիտանի՝ ռազմական նշանակություն ունեցող արտադրանքը, դրանց լիցքերը, կրիչները, գործարկիչները, բաղադրիչները, համալրող սարքերը և վնասակար թափոններն ու նյութերն ուտիլիզացնող, ոչնչացնող և կոնսերվացնող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն ներմուծվող, Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող ապրանքների ռազմական նշանակության պատկանելության հարցի վերաբերյալ անվճար հիմունքներով

և միայն համապատասխան պետական մարմինների հայտերի հիման վրա փորձագիտական եզրակացություն տրամադրող կազմակերպություն է։

2. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության։

3. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ։

4. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով։ Կազմակերպությունն իր անունից ձեռք է բերում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող։

5. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և հայերեն ու անգլերեն՝ իր անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, դրոշմակնիքներ և այլ անհատականացման միջոցներ։

6. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կանոնադրությանը համապատասխան՝ կազմակերպությունը, լիազորված պետական մարմնի որոշմամբ, կարող է ունենալ մասնաճյուղեր և գիտափորձնական, ուսումնական հիմնարկներ։

7. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվներ։

8. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ։

9. Կազմակերպությունը կարող է համագործակցել Հայաստանի Հանրապետության, միջազգային կամ օտարերկրյա այլ կազմակերպությունների հետ։

10. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Վաղարշապատ (Էջմիածին), 1102, Մովսես Խորենացու 18։

11. Կազմակերպության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոնե պետական ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ «Ականազերծման և փորձագիտական կենտրոնե ՊՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ Государственная некоммерческая организация «Центр гуманитарного разминирования и экспертизыե.

4) ռուսերեն կրճատ՝ ГНКО «Центр разминирования и экспертизыե.

5) անգլերեն լրիվ՝ «Center for humanitarian demining and expertiseե state non-commercial organization.

6) անգլերեն կրճատ՝ «Center for demining and expertiseե SNCO։

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

12. Կազմակերպության գործունեության առարկան են՝

1) Հայաստանի Հանրապետության ականապատ տարածքների ականազերծումը, տեղադրված, սակայն չպայթած արկերի և ականների հայտնաբերումն ու ոչնչացումը.

2) Հայաստանի Հանրապետությունում ժամկետանց կամ կիրարկման համար ոչ պիտանի՝ ռազմական նշանակություն ունեցող արտադրանքի, դրանց լիցքերի, կրիչների, գործարկիչների, բաղադրիչների, համալրող սարքերի և վնասակար թափոնների ու նյութերի ուտիլիզացման, ոչնչացման և կոնսերվացման պետական ծրագրերին մաս-

նակցությունն ու դրանց իրականացումը և դրա արդյունքում ստացված արժեքների՝ հանրօգուտ նպատակներին ուղղումը.

3) ռազմական նշանակություն ունեցող արտադրանք համարվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցանկին արժեքների պատկանելության վերաբերյալ պետական մարմիններին՝ վերջիններիս հարցման հիման վրա փորձագիտական եզրակացություն տրամադրելը.

4) ռազմական նշանակություն ունեցող արտադրանք համարվող արժեքների ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման նկատմամբ հսկողության նպատակով լիցենզավորված անձանց՝ ներկազմակերպական ծրագրի համակարգի վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը և դրա ձևավորմանն աջակցությունը։

13. Կազմակերպության գործունեության նպատակներն են՝

1) ականապատ տարածքներում ականների պայթյունից խաղաղ բնակիչների զոհվելու հնարավորության բացառումը.

2) պետական կառավարման մարմինների հարցման հիման վրա ապրանքների՝ հսկվող ապրանքների ցանկին պատկանելու վերաբերյալ եզրակացության տրամադրումը։

14. Կազմակերպությունն իրականացնում է իր գործառույթների ոլորտին առնչվող ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) գիտատեխնիկական, փորձարարական, խորհրդատվական ծառայությունների մատուցում, դիագնոստիկա, փորձարկում, զննում.

2) լաբորատոր ուսումնասիրությունների, հետազոտությունների և փորձարկումների իրականացում.

3) կազմակերպության գործունեությանն առնչվող ուսուցողական-մեթոդական ձեռնարկների, բուկլետների, պլակատների կազմում և տպագրություն, թեմատիկ խորհրդանշանների և հուշանվերների արտադրություն.

4) մասնագիտական ուսումնական դասընթացների իրականացում։

15. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության արդյունքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար։

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

16. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը, և կազմակերպության խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ)։

17. Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի։

18. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) կազմակերպության հիմնադրումը.

2) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրա մեջ փոփոխությունների կատարումը.

4) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

5) կազմակերպության վերակազմակերպումն ու լուծարումը.

6) կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը։

19. Լիազորված պետական մարմինն իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար։

20. Լիազորված պետական մարմինը՝

1) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորում է կազմակերպության կառավարման մարմինները և վաղաժամկետ դադարեցնում նրանց լիազորությունները.

2) իրականացնում է կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունը.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության գործադիր մարմնի կամ կոլեգիալ մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

4) լսում է կազմակերպության գործունեության մասին տնօրենի հաշվետվությունները, քննարկում և հաստատում դրանք, քննում է կազմակերպության գործունեության վերստուգման արդյունքները.

5) իրականացնում է վերահսկողություն կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

6) իրականացնում է վերահսկողություն կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս կազմակերպության գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

7) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակում է կազմակերպության տնօրենին, նրա հետ կնքում աշխատանքային պայմանագիր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով վաղաժամկետ դադարեցնում է նրա լիազորությունները.

8) իրականացնում է ընթացիկ վերահսկողություն կազմակերպության տնօրենի գործունեության նկատմամբ.

9) սահմանում է կազմակերպության տնօրենի աշխատանքի վարձատրության պայմանները.

10) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իր համաձայնությունն է տալիս կազմակերպությանը՝ կատարելու խոշոր գործարքներ.

11) իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ։

21. Կազմակերպության ընթացիկ գործունեությունն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է (նրա լիազորությունները դադարում են) լիազորված պետական մարմինը։

22. Տնօրենն օրենքով, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն՝ օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար։

23. Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը։ Պայմանագրով սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի, կազմակերպության կառավարման այլ մարմինների հետ, նրա աշխատանքի վարձատրության պայմանները,

պայմանագրի դադարման՝ օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը կգտնեն անհրաժեշտ։

24. Կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական կամ ստեղծագործական աշխատանքից։

25. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և պետությանը պատճառված վնասի համար։

26. Տնօրենի պաշտոնում նշանակվելու համար անհրաժեշտ պահանջները, այն անձանց շրջանակը, ովքեր իրավունք չունեն նշանակվելու այդ պաշտոնում, ինչպես նաև այդ պաշտոնից ազատվելու հիմքերը սահմանվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով։

27. Կազմակերպության տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներ-կայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) կազմակերպության անունից վերջինիս համար բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

6) կատարում է աշխատանքի բաժանում իր տեղակալների միջև.

7) սահմանում է կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

8) հաստատում է կազմակերպության ստորաբաժանումների կանոնադրությունները.

9) հաստատում է կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները.

10) նշանակում է կազմակերպության հիմնարկների, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին, նրանց տալիս է լիազորագրեր.

11) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր իրավասությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

12) խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է կազմակերպության խորհրդի նիստերին.

13) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ։

28. Կազմակերպության խորհուրդը խորհրդակցական կոլեգիալ մարմին է։

29. Կազմակերպության խորհուրդը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով լիազորված պետական մարմին է ներկայացնում առաջարկություններ կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ.

2) սահմանված կարգով լիազորված պետական մարմին է ներկայացնում առաջարկություններ կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ.

3) հաստատում է իր աշխատակարգը.

4) փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում է խորհրդի նախագահ.

5) քննարկում է կազմակերպության հաշվապահական հաշվետվությունները.

6) իրականացնում է հսկողություն իր որոշումների կատարման նկատմամբ.

7) լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով, տնօրենի ներկայացմամբ, հաստատում է կազմակերպության շահույթի օգտագործման ուղղությունները.

8) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ։

30. Խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի անդամների կողմից, նրանց կազմից՝ երեք տարի ժամկետով։ Խորհրդի նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքում անցկացվում է խորհրդի նախագահի արտահերթ ընտրություն։

31. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.

2) նախագահում է խորհրդի նիստերը.

3) խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակաշրջանում համակարգում է տնօրենի և խորհրդի անդամների միջև կապը։

32. Խորհրդի նիստերը գումարվում են խորհրդի նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր տարին մեկ անգամ, ինչպես նաև՝ լիազորված պետական մարմնի, տնօրենի և խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով։ Խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և կարգով։ Խորհրդի նիստերի անցկացման կարգը և ձևը որոշում է խորհրդի նախագահը։

33. Խորհուրդը բաղկացած է չորս անդամից։ Խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի տեղակալը։

34. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին։

35. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ։ Ձայների հավասարության դեպքում նիստը նախագահողի ձայնը վճռորոշ է։

36. Քվեարկության ժամանակ խորհրդի անդամն ունի մեկ ձայնի իրավունք։

37. Խորհրդի նիստերն արձանագրվում են նիստի քարտուղարի կողմից, որն ընտրվում է խորհրդի անդամների կողմից՝ կազմակերպության աշխատողների թվից։ Կազմակերպության տնօրենը չի կարող ընտրվել որպես խորհրդի նիստի քարտուղար։

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

38. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից և միջոցներից։

39. Կազմակերպությունն իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը։

40. Հիմնադիրը սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի։

41. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը։

42. Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում։

43. Հիմնադիրն իրավունք ունի կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու ցանկացած գույք։

44. Կազմակերպությունն իրավունք ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը հանձնելու վարձակալության։

45. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման։

46. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը, լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո, պետության անունից հանձնելու վարձակալության։ Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող լինել մեկ տարվանից ավելի։

47. Սեփականության իրավունքով իրեն պատկանող և իրեն ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները նրա սեփա-կանությունն են՝ բացառությամբ իրեն ամրացված գույքի վարձակալությունից գոյացած վճարների, որոնք սահմանված կարգով ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե։

48. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը և ֆինանսական միջոցները։

49. Կազմակերպության ֆինանսական միջոցները ձևավորվում են՝

1) յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը նախատեսվող միջոցների հաշվին.

2) ձեռնարկատիրական գործունեությունից գոյացած միջոցներից.

3) դրամաշնորհներից.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրներից։

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

50. Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Կազմակերպության լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
փետրվարի 17-ի N 143 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

«ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԵ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

NN ը/կ	Գույքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի հաշվեկշռային արժեքը (դրամ)	Ընդհանուր հաշվե-կշռային արժեքը (դրամ)
1	2	3	4	5	6
1.	Աթոռ՝ փափուկ, մետաղյա կարկասով (կարմիր)	հատ	2	20000	40000
2.	Աթոռ՝ կիսափափուկ	հատ	2	60000	120000
3.	Աթոռ՝ կոշտ, մետաղյա կարկասով, պլաստմասսայե, շագանակագույն	հատ	4	7000	28000
4.	Աթոռ՝ կոշտ, մետաղյա կարկասով, պլաստմասսայե, մոխրագույն	հատ	7	14000	98000
5.	Բազկաթոռ՝ փափուկ, պտտովի, շարժական	հատ	1	32400	32400
6.	Պահարան՝ մետաղյա, չորսդարականի	հատ	1	65000	65000
7.	Զգեստապահարան՝ երկդռնանի	հատ	2	50000	100000
8.	Գրասեղան՝ մեկ պահարանիկով (փոքր)	հատ	1	35000	35000
9.	Օդափոխիչ	հատ	3	200000	600000
10.	Ջրատաքացուցիչ	հատ	3	27000	81000
11.	Աթոռ՝ սև, մետաղյա կարկասով	հատ	5	11500	57500
12.	Գրասեղան՝ 90/75/200	հատ	1	60000	60000
13.	GPS սարք «MAGELLANե 315	հատ	14	246000	3444000
14.	Թվային տեսախցիկ «SONYե	հատ	2	185000	370000
15.	Թվային ֆոտոխցիկ «SONYե	հատ	1	90000	90000
16.	Պրոյեկցիոն լապտեր՝ In Focus LP 130	հատ	1	297000	297000
17.	Պրոյեկցիոն լապտեր՝ Apollo	հատ	1	96000	96000
18.	Շարժական էկրան, պրոյեկցիոն լապտերի էկրան	հատ	1	36000	36000
19.	Հեռուստացույց/տեսամագնիտոֆոն՝ unit Combi KF 14U43 LG	հատ	1	100000	100000
20.	Հեռուստացույց SONY KV21DK1	հատ	1	130000	130000
21	Համակարգիչ՝ Dell 8200, ստեղնաշար, մկնիկ	լրակազմ	1	225000	225000
22.	Համակարգիչ՝ Dell Optilex 320	լրակազմ	1	230000	230000
23.	Համակարգիչ՝ P4-3.0 GHz	լրակազմ	1	85000	85000
24.	Համակարգիչ՝ HP dx 7400	լրակազմ	1	427480	427480
25.	Համակարգիչ՝ HP ML 350 G5	լրակազմ	1	2618240	2618240
26.	Շարժական համակարգիչ՝ Dell	հատ	2	592620	1185240

1	2	3	4	5	6
27.	LCD մոնիթոր Dell 1503FP, հոսանքահաղորդիչ՝ Dell PSC 36014 A	հատ	1	91000	91000
28.	LCD մոնիթոր L1750 17 GF904AA	հատ	1	86310	86310
29.	LCD մոնիթոր BENQ 15 FP531	հատ	1	87000	87000
30.	APC Smart UPS 1500 USB-BACKUPS	հատ	1	208000	208000
31.	APC UPS BACK-UPS ES525 VA 230 V	հատ	1	27500	27500
32.	UPS «Cyber Powerե 1250A VR 110 Վոլտ	հատ	2	65000	130000
33.	APC UPS BR500	հատ	1	65000	65000
34.	UPS «Power Comե 600 VA	հատ	2	20000	40000
35.	APC Smart UPS 700	հատ	1	48000	48000
36.	Ցանցի բաժանարար՝ 16 բրտ Gembrid NS-16P	հատ	1	25000	25000
37.	Ցանցի բաժանարար՝ 4 բրտ	հատ	1	15000	15000
38.	Տպող սարք՝ (պլոտեր) HP Designjet 500 AO	լրակազմ	1	717948	717948
39.	Տպող սարք՝ HP Deskjet 9650	լրակազմ	1	151 844	151844
40.	Տպող սարք՝ HP Laserjet 5500DTN Q3716A	հատ	1	1611230	1611230
41.	Տպող սարք՝ HP CP 3505 DN	հատ	1	272000	272000
42.	Տպող սարք՝ Workcentre PE220	հատ	1	111500	111500
43.	Ջերմաճնշող տպող սարք՝ ՖՊ 1515	լրակազմ	1	50000	50000
44.	Սկաներ՝ HP Scanjet 5300 C	լրակազմ	1	45000	45000
45.	Սկաներ՝ A HP Scanjet 5590	լրակազմ	1	60060	60060
46.	Մարտկոցներ «Motorollaե GP 340 համար	հատ	20	14640	292800
47.	Symantec հակավիրուսային փաթեթ	հատ	1	388773	388773
48.	Ականորսիչներ՝ Vallon-VMH 1	հատ	7	350000	2450000
49.	Ականորսիչներ՝ Vallon-VHM 2	հատ	3	350000	1050000
50.	Ականորսիչներ՝ Vallon-ML1620 B	հատ	9	350000	3150000
51.	Մարտկոցների լիցքավորիչ՝ 8-տեղանոց	հատ	1	45000	45000
52.	Հոսանքի գեներատոր «Olympiaե	միավոր	1	10000000	10000000
53.	«Ֆոլկսվագեն-Տուարեգե ավտոմեքենա	միավոր	4	9800000	39200000

Ընդամենը՝ 71069825 դրամ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011 թվականի
փետրվարի 17-ի N 143 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

«ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԵ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ

NN ը/կ	Գույքի անվանումը	Չափի միավորը	Արտաքին մակերեսը	Հաշվեկշռային արժեքը (դրամ)
1.	Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարու-թյան N 52265 զորամասի շտաբի եռահարկ շենքի 3-րդ հարկը (քաղ. Վաղարշապատ (Էջմիածին), 1102, Մովսես Խորենացու 18)	քառ. մետր	439,42	13725000

Ընդամենը՝ 13725000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ